



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-473-

Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒԺՎՈՂՎԿՈՄԸ. — ՈՒՍՈՒՄՆԱ. — ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵՎՏՈՐ

ՆԵԽԵԳՊՐՈՑԱԿԵՆ ՀԻՄՆԵՐԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԾԲԸԳԻՔ

ՊԵՏՎՈՒԹՅՈՒՆ — ՈՒՍՈՒՄՆԱԿՐԱՍԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ


1932

6 NOV 2017

- 473 -

Հ. Ա. Խ. 2. ԼՈՒԳ ԳՈՂԿՈՄԱՏ — ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԿՆԵՐԻ
ԳՐԱԴԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ



ՊԵՏՀԱՆՈՒՄ — ՈՒՍՈՒՄՆԱԿՀՐԱՄԱԳՐԻ

ՅԵՐԵՎԱՆ

1932

ԴՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾԲԱԳԻՔ

1. Մանկապարտեզի վերջին խումբը, վորը համապատասխանում է գլուխական զերս խմբին, պետք ե իր վրա վերցնի յերեխաներին գրագիտություն սովորեցնելու պարտականությունը:

Մանկապարտեզից դպրոց փոխադրվելիս յերեխաները պետք ե պատրաստ լինեն աշխատելու գրագետ առաջին խմբում, վորպեսզի այդ խմբի դասատուն զըելու յեվ կարդալու տեխնիկայով չզբաղվի, այլ այդ տեխնիկան կատարելագործի յեվ ողտագործի զըել կարդալու համար:

Սբա համաձայն մանկապարտեզի վերջին խմբի ղեկավարը պետք ե գրագիտության պլանային, սիստեմատիկ աշխատանք կազմակերպի: Անհրաժեշտ է, վոր ղեկավարը ձեռնարկելով գրագիտության ուսուցումը, պարզ ու վորոշ համացողություն ունենա այն մեթոդի մասին, վորով նա պետք ե ղեկավար վի և նախորդը պատրաստի անհրաժեշտ նյութերն ու պիտույքները: Ղեկավարը պետք ե հոգ տանի, վոր մանկան շրջապատը գրագիտության ուսուցմանը խթան հանդիսանա: Յերեխալին չի հետաքրքրում այն աշխատանքը, վորն ապագայի համար ե, նա պահանջում է, վոր գրագիտությունը գործադրի իր տորոյականքում: Ունակությունների ամրացման վարժությունները պետք ե կատարվեն թե գիտակտիկական նյութերով յեվ թե պիտույքներով: Մանկական կոլեկտիվի կանքը կանոնավորելու և մշտական աշխատանքի կազմակերպումը պահանջում է կարգագրելու վարժությունների կիրառումը: Հերթապահությունը, հաճախման հաշվառումը, բրիգադաների յեվ ողակների բաժանելը, աշխատանքի կազմակերպումը, տոները, հասարակական

Հայագովորակի տպարան
Հրատար. № 2313
պատվեր № 2557
Գ. 7591 (թ)
Տիրած 1500



11-261239/1

Հանձնված և արտադրության 26/VIII 1932 թ.
Ստորագրված և սպազրության համար 17/VIII 1932 թ.
Երբազրեց՝ Հովհ. Հակոբյան

աշխատանքները, այս բոլորի համար գրագիտությունը պետք է խաղալին գործունեության մեջ ել գրագիտությունը մտնում է: Զանազան տեսակի լուսուների խաղալը նույնպես անձիշտվես կտպված է յերեխաների ինքնուրուցին գրագիտություն սովորելու հետ յեվ ունակությունների ամրացման համար թանկագին նյութ ե հանդիսանում:

Յերեխաների աղատ ստեղծագործական խաղերը (կոռպերատիվ, գնացք, գործարան) մեծապես ոգնում ե գրագիտությունը կիրառելուն յեվ ունակությունների ամրացմանը:

Գրավոր խոսքը, վորպես արտաքին աշխարհի հետ հաղորդակցության միջոց, գործադրվում է այլ հիմնարկների յերեխաների՝ հետ գրագիտություն ունենալու զանազան տեսակի պրակատներ, լոգունգներ, ծանուցագրեր, հրավերներ գրելու համար:

Պարզ է ուրեմն, թե ինչպիսի սկզբունքային դրույթ պիտի ունենան մանկապարտեզի գերո յեվ բարձր խմբերի դրագիտության պարապմունքները:

Այս դրույթի մեթոդով վորոշվում է ուսուցման մեթոդը՝ Գրագիտության ուսուցումը վոչ թե պետք ե հիմնված լինի սիմվոլների, նշանների յեվ հնչունների վրա, այլ կենդանի, յերեխաներին ծանոթ յեվ հասկանալի խոսքի վրա, վորոնք կարդալ-գրելու պրոցեսի լուրացման հիմքը պետք ե կաղմեն: Ամբողջական սառերի մեթոդը կիրառելիս, յերբ յերեխաները յեղ ղեկավարներն իսկուն չեն կարող գործունեության մեջ դնել բառերը, գրագիտությունը կապվում է կյանքի հետ, կյանքն ե խթան հանդիսանում, իսկուն կիրառվում է գրել-կարդալու պը-րոցեսը յեվ այդ պրոցեսի համար նյութերի ընտրությունը կատարվում է սիստեմատիկ կերպով, հետեղեւտե հաղթահարելով դժվարությունները:

Վորովինետեվ այս մեթոդով գրագիտության ուսուցումը հենվում է զիխավորապես տեսողական ընթուղության վրա, այդ պատճառով ել մանկապարտեզների ստորին խմբերի ղեկավարները պետք ե հոգ տանեն զարգացնելու յերեխաների տեսողությունը, տեսողական հիշողությունը, առարկաների դաստիքորության յեվ ձեվերի ընթունման ընդունակությունը: Այս ըն-

դունամկությունը հետագայում ոգնում է յերեխային բառերի ձեւերը հիշելուն: Այդ խմբերի ղեկավարները պետք ե մեծ ուշադրություն դարձնեն յերեխաների ուղիղ խոսելու, նրանց բառապաշտարի հարստացման, այս լսողության զարգացման վրա: Առհասարակ մինչև գրագիտության ուսուցումը, պետք ե ուշադրություն դարձնել յերեխայի վողջ ըմբռնողական ապարատի զարգացման վրա:

Այս կերպ պատրաստված յերեխան անցնում է բառերի հիշողությանը:

Յերեխաների մեջ զարգանում է բառերի ձեվը հիշելու, վորեւվե գործողության, հատկության հետ կապելու, բառն ամբողջովին արտասանելու ունակությունները:

ՀԻՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՌԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Յերեխաների ուշադրության կենտրոնում յեղած բոլոր բառերը չեն մտնում այն բառաշարի մեջ, վորը պետք ե ծառալի, վորպես հիշելու վարժություն յեվ վորի վրա պետք ե հենվի հետագայում գրագիտության լուրացումը: Հիշողության համար ընտրված բառերը պետք ե լինեն կարճ, հասկանալի, վորեւվե իրական առարկայի, գործողության, հատկության հետ կապված յեվ հնչվեն այնպես, ինչպես զրվում են, այսինքն կասկածելի ձայնավոր կամ բաղաձան տառեր այդ բառերի մեջ չպետք ե լինեն:

Մնացած յերկար ու դժվար բառերը, վորոնք գործ են ածվում գրագիտության ուսուցման ընթացքում, յերեխաները հիշում են հետագալում, շատ վարժություններ կատարելուց հետո:

Բառերի հիշողության պրոցեսի ընթացքում յերեխաների աչքի առաջից անցնում է համարլա վողջ ալբուբենը զանազան կոմքինացիաներով: Այդ ժամանակ նրանք տեսնում ու լսում են բառերի բաղկացուցիչ մասերը (տառերը) յեվ հետզինետե մոտենում են նրանց զատելուն: Յերեխաները տեսնում են բառը արտամանում, կապում նրա ձեվակերպման հետ (յեվ արտանըկարում նրա ձեվակերպման հետ) յեվ արտանկարում թերթիկների վրա: Բոլոր վարժությունները, գիդակտիկական նյութերը,

յերեխաների ինքնուրույն աշխատանքը, առաջադրությունները այն նպատակն ունեն, վոր յերեխաները հիշեն բառերը յեվ կարողանան գրել հիշողությամբ. վերջ ի վերջո յերեխաները սկըսում են ուշադրություն դարձնել տասնձին տառերի վրա յեվ նրանց զատել, միանգամայն ինքնուրույն կերպով մոտենալով տառական անալիգին:

Ամեն մի գրագիտություն սովորող անխուսափելի կերպով պետք ե անցնի անալիգով: Այդ ժամանակ յերեխաները վարժվում են դիտել բառերի կազմությանը յեվ տառեր բաց թողնելոց խուսափելու համար պետք ե նրանց ուշադրությունը դարձնել բառակազմության վրա: Մանկապարտեզային աշխատանքի պայմաններում գրագիտության նախապատրաստական աշխատանքներն սկսվում են նախավերջին խմբից, այն ժամանակ հատկացվում ե 1¹/₂ տարի, անալիգի համար պահանջվում ե զեկավարների հատուկ միջամտությունը: Յերեխաները կարողանում են անալիգ անել, այսինքն զատել տառերը յեվ նրանցից ինքնուրույն կերպով բառեր կազմել:

Դեկտարը պետք ե բառերի տառերը զատելու յեվ բառեր կազմելու նյութեր մատակարարի: Այս ժամանակ յերեխաներին տրվում ե շարժական տառեր: Յերբեքը յերեխաները լուրացնում են ալբուրենի մեծ մասը /20—25. ը/. այսուհետեւ կարելի յե ծանոթացնել տպագիր տառերին: Նրանց տրվում ե հեշտ բնագիրը ունեցող յեվ տառերով տպագած դիրք:

Շ Թ Ի Ֆ Տ

1. Գրելը տարվում ե ընթերցանության հետ միասին: Յերեխաները նախ ընդորինակում են բառերը վորպես նկար, ապա հասնելով անալիգին նրանք կարողանում են ինքնուրույն կերպով բառեր գրել:

2. Նրանք սկսում են տպագրից: Տպագիր տառերը գրվում են զատ-զատ յեվ չի պահանջվում միացված գրություն, վորը յերեխայի ձեռքի համար դժվար է: Կանքում յերեխաները հաճախ են տպագրի հանդիպում յեվ այս հանդամանքը նրանց:

Ինտրավորություն ե տալիս ինքնուրույն վարժություններ կատարելու. գրքեր, լրագրեր, տրանվայի վրա գրվածքներ, պլակատներ, ամեն տեղ յերեխան տպագիր ե տեսնում:

Հասարակ տպագիրը, կազմված յերեխաների ուժերին համապատասխան ելեմենտներից, միացնող գծերի բացակայությունը, լուրացանչուր տառի առանձին լինելը, յերեխայի աշխատանքի համար դժվար չե յեվ հանգում ե ինքնուրույն կերպով անալիգ կատարելուն:

Տպագիրը լուրացնելուց հետո, կարելի յե անցնել ձեռագրին մատիտով: Անհրաժեշտ պահանջները պետք ե արվեն հեց սկզբից, գրելիս ուղիղ նստել, մաքրություն, պարզություն: Յերեխաները պետք ե գրեն 10—15 րոպեյից վոչ ավելի: Յերեխան պետք ե գրի միայն այն ինչ վոր կարդացել ե, ինչ վոր նա գիտի: Մինչև վոր յերեխաները կարդալու տեխնիկային չտիրապետեն, անծանոթ բնագիր չպետք ե արտագրել: Մանկապարտեզի յերեխաների համար հատուկ նախապատրաստական վարժություններ չի պահանջվում, նկարչությունը, ձեփելը յեվալին բոլոր աշխատանքները, վոր կատարում են յերեխաները մտնկապարտեզում, լիովին զարգացնում են ձեռքերի այն մանր մկանները, վորոնք մասնակցում են գրության ժամանակ:

Գրչով գրելուն շուտ չպետք ե անցնել, վորովհետեւ այս տեխնիկայի պրոցեսը այդ հասակի յերեխաների համար շատ դժվար է: Ով վոր տեսել ե 6—7 տարեկան յերեխայի ձեռքի ունտգենալան նկարը մեծահասակի ձեռքի հետ, նրա համար պարզ կլինի, վոր այդ փափուկ մանկական ձեռքը գրչին տիրապետելու հարավորություն չունի.

Այն յերեխաները, վորոնք 3—4, տարեկանից մանկապարտեզ են հաճախում, պետք ե գրագիտությունն ըմբռնելու բավականաչափ պատրաստականություն ունենան: Նրանք կազմակերպված են կոլեկտիվ կյանքին, կոլեկտիվ աշխատանքին, աշխատանքի բաշխմանը սովոր, բայց մինչև վերջին խումբը, սիստեմատիկ ծրագրի մասին խոսելու հարկ չպետք ե լինի: Դեկավարը նկատի ունենալով յերեխաներին ավագ կամ զերո խըմբին հանձնելը, պետք ե ուշագրությունը բեվեռի գիտելիքների

յեվ ունաւկութիունների վարժությունների յեվ հաշվառման վրա կարդալ գրելու տեխնիկայի լուրացման, տեսողական հիշողության զարգացման, ձեվերի յեվ առարկաների դասավորության ըմբռման, լսողության զարգացման, կանոնավոր խոսակցության յեվ բառապաշարի հարստացման։ Այս խմբում գրագիտությունը բնույթ չունի, այլ արվում ե վորպես անհրաժեշտ տարր յերեխաների կանքի յեվ խմբի կազմակերպման մեջ։ Գրագիտությունը սկսվում ե յերեխաներին անհրաժեշտ բառեր ըւսուցանելուց յեվ սովորում են այդ բառերը նրա համար, վոր նրանց հարկափոր ե խմբի կանքը կազմակերպելու յեվ կանոնավորելու համար։

Խմբերում յերեխաները հաշվառում են կատարում, նշում իրանց տեղերն ու աշխատանքը, գործադրելով նկարներ կամ նշաններ։ Ամեն մեկը հիշում է իր նշանը։ Այժմ յերեխաներին առաջարկվում ե նշանները փոխադրել իրենց անուն-բառերով։

3. Առաջ այդ անունները գրվում են նշանների կողքին, հետո նշանները փոխացվում են յեվ մնում միախանունները։ Ինչպես վոր յերեխաները հիշում ելին իրենց նշանները, այնպես ել կիշեն իրենց անունները։ Այդ անունները հիշելու համար յերեխաներն ամեն որ խմբի կանքում վարժություններ են կատարում։ Ամեն որ նրանք պետք է ինքնահաշվառում կատարեն, այսինքն գտնել թերթիկների վրա իրենց անունը կախել, կամ թերթի վրա ընդորինակել։ Բայց յերեխաները պետք է գիտենան, թե ինչու համար ե հաշվառումը յեվ լուրջ վերաբերմունք ցուց տան։

Հերթապահները պետք ե նշանակեն բացակա ընկերների անունները։ Վորոշ ժամանակից հետո պետք ե հաշվեն յեվ իմանան թե ով, ինչքան ե բացակայել։ Նրանք տեսնում են զրա անհրաժեշտությունն այն հիմնարկում, ուր հաճախում են յեվ վորի հետ զործ ունեն։ Յերեխաներն ամեն որ կախում են զանազան հերթապահների անունները, զրում իրենց տեղերում բրիգադների անդամների անունները։ Այդ պատճառով անունների վրա կանգ առնելու յեվ բառերը հիշելու հատուկ պարապմունքներ կատարելու անհրաժեշտության չկա։

Յեթե յերեխաներն իրենց աշխատանքի ընթացքում վորելի բառի կարիք են զգում յեվ խնդրում են տալ այդ բառը, այդ դեպքում բառը տրվում է յեվ իհարկե ձեռագիր խոշոր գրեթե գրված։ Նրանք ընդորինակում են յեվ ոգտագործում իրենց կարիքների համար, իսկ արտագոյել նրանցից չի պահաջնակում։

Սենյակում կարգ ու կանոն լինելու համար պահաջնակում ե, վոր ամեն մի իր հատուկ տեղն ունենա։ Առաջ այդ տեղերը նշանակվում ելին նկարներով, իսկ այժմ նկարները փոխարինվում են բառերով։

Յերեխաները ստանում են տարվա յեղանակները նշանակող բառեր, վորոնց մասին նրանք խոսում են, դիտում այդ յեղանակների բնորոշ գծերը-ձմեռ, ձյուն, ցուրտ։

4. Յուրաքանչյուր յերեխալին տրվում է թերթիկ, վորի վրա նկարված են ձեռքեր, ականջներ, վիզ։ Յերեխալի առաջ տրվում են յեվ համապատասխան բառեր, հետո նկարները վերցվում են յեվ մնում են միախանունները։

Յերեխաները պետք ե հիշեն հետեւվալ բառերը։

Նկար	Նկար	Նկար	Նկար	Նկար
ձեռքեր	վիզ	ականջներ	յերես	տտամներ

Այսպիսով յերեխաները բառի ձեվը հիշելու, բառը ճանաչելու յեվ նրան ընդորինակելու ունակությունն են ձեռք բերում։ Ահա զբագիտության վողջ ունակությունների, գիտելիքների յեվ կարողությունների ծավալը յեվ մոտավոր պաշարը, վոր յերեխաները ստանում են մի խմբում։

Ավագ խմբում յերեխաներն անցնում են զբագիտության խսեմատիկ աշխատանքի, վորն իր բնույթով նման ե դպրոցական աշխատանքին։

Առաջին 2 գեկատը հատկացվում է խմբի կանոնավորման յեվ կազմակերպման աշխատանքներին, յերեխաների միջին խմբում ձեռք բերած փորձի հայտնաբերման։ Դրա համար զեկուարն աշխատանքն այնպես ե կազմակերպում, վոր յերեխաները հայտնաբերեն իրենց փորձը, առաջադրություններ ե տալիս նրանց տեսողական հիշողության, ձեվերն իրարից տարրերելու ստուգման համար։ Տալիս ե բառերի վերաբերյալ ստու-

գիշ աշխատանք, վորքանով լերեխաները հիշում են նախորդ տարվա ընթացքում սովորած բառերը։ Տալիս ե ինքնուրուց կերպով կատարելու առաջադրությունները։ Այս առաջադրությունների կատարումից պարզվում է, վոր լերեխաները բաժանվում են 2 տեսակի—առաջ գնացած լեկ լետ մնացած, վորոնց վրա պետք ե ուշադրություն դարձնել լեկ ողնել, վոր առաջ գնան։ Ապա տրվում են նոր բառեր։ Յեթե այս աշխատանքն սկսվում ե աշնանից, այն ժամանակ առաջին զլխավոր խոսքերը կապվում են աշնան հետ, այնպիսի բառեր, վորոնք ըղիսում են աշնան մասին պատճած զրուցներից, դեպի անտառը, բոստանը կոռպերատիվը, կատարած եքսկուրսիաներից, տերեփսիերը, ծառերը, բանջարեղենները դիտելուց լեկ այն։ Հիշելու լեկ գրանցման համար ընտրվում են կարճ ու հեշտ բառեր՝ որինակ ծառ, սոխ, ուռի, տերե, բողկ, գազար, սեխ լեկ-այն։

Յերեխաները նկարում են, տակը գըում, շինում են ըստուղիչ թերթիկներ, վորոնց մի լերեսի վրա զրվում ե բառը, իսկ հետեվյալ լերեսին զրվում կամ փակցվում ե համապատասխան նկար։ Այդ բառերով լոտո լեն շինում, պատից կախ են անում ծրարներ, վորոնց մեջ տրվում են, ըստ դժվարության աստիճանի, բառեր զրված թերթիկները, վորպեսզի լերեխաները դրանցով վարժություններ կատարեն։ Որինակ ինքնուրուց աշխատանքը կարող է իր մեջ պարունակել հետեվյալ առաջադրությունը. տրվում են ծառեր լեկ բանջարեղեններ նշանակող բառեր լեկ առաջարկվում բաժանել լերկու սլունակի։

Ծառեր

Բանջարեղեններ.

Ալդպիսով հետզհետե լերեխաների բառերի պաշարն ավելանում է։ Նրանց ուշադրությունը դարձվում ե բառերի լեկ նրանց կազմության վրա։ Ընդորինակելիս նրանք զրում են ամեն մի թղթի վրա առանձին լեկ գիտեն, վոր բառերը կազմվում են տառերից, վորոնցից ամեն մեկն ունի իր հնչունը։

Այս դժվարություններին տրվում ե լերկու դեկատ (լերեմն լերեք, նախած խմբի կազմին)։ Այդ ժամանակ լերեխաներն

ակսում են զատել բառերի առաջին տառերը լեկ այնպիսի նոր բառեր են ընտրում, վորոնց մեջ այդ տառերը կան, այսինքն ինքնուրուց կերպով անցնում են անալիզի։

Դեկավարն ոգնության ե զալիս լեկ նրանց ուշադրությունը դարձնում ե այն հանգամանքի վրա, վոր մի տառով բառն իր նշանակությունը փոխում ե։ Որինակ՝

Կարո	Սիրան	Սերիկ
Մարո	Տիրան	Ներիկ

վորպեսզի նրանց նմանությունն ու տարբերությունը ցալտուն լինի, զեկավարն այդ բառերը զրում ե իրար տակ։ Յերեխաները տեսողությամբ լեկ լսողությամբ համեմատում են այդ բառերը լեկ գտնում նման լեկ տարբեր տառերը։ Այդ բոպելից հրանք ստանում են շարժական ալբուբենը կազմում այդ բառերը, արտասանում, ավելացնում ուրիշ տառեր, մտածում լեկ ասում այգպիսի բառեր։ Յերեխաներին տրվում ե նախորդք պատրաստված տուփեր, վորոնց մեջ կան շարժական տառեր։ Առաջարկվում ե այդ տառերից կազմել այն բառերը, վորոնք զրված են տուփի վրա։ Ավելի բարդ աշխատանք ե, լեր կազմելիք բառերը տուփի վրա զրված չեն լինում, այլ լերեխաները ունենալով վորոշ տառեր, զրանցից իրենք պետք ե բառեր կազմեն լեկ արտազրեն տետրակում։

Հետզհետե զատվում են ալբուբենի բոլոր տառերը լեկ լերեխաներն իրենց ալբուբենն են կազմում։ Տառերի տպագիր ձեվակերպությունը լուրացնելուց հետո, հետզհետե անցնում են ձեռագիրն։ Նախ տեսողությամբ ծանոթ բառերում համեմատում են ձեռագիր ու տպագիր տառերը (որինակ № 5) լեկ ապա զրում, զրելու համար տեխնիկապես դուռին բառեր։

Դեկավարը նախորդք կտրում ե զանազան ալբուբենարաններից կարճ նախադասություններ կամ փոքրիկ պատմվածքներ (2—3 տող) լեկ կազմում ստվարաթղթի վրա։ Հետզհետե տըրդ գում են ավելի լերկար լեկ գժվար բնագրեր։ Այս հասակում պետք ե լերեխաների աշքը վարժեցնել հորիզոնական ուղղության, այսինքն մի տողից միուսին անցնելուն։ Այդ պատճառով

հանձնարարվում ե կարդալ տալ նախ պատերին կպցրած, կարտոնների վրա գրածը, ապա տետրերում:

Գրելն ու կարդալը տարվում են զուգահեռ, բայց վորովհետեւ գրելն ավելի բարդ գործ ե քան կարդալը, ուստի կարդալու տեխնիկաից սովորաբար լետ ե մնում: Այս հանդամանքը ղեկավարին չպետք ե վրդովեցնի: Մնացած ժամանակն ոգտագործվում ե գրելու լեկ կարդալու տեխնիկան կատարելագործելու համար: Գրամանաշությունն ոգտագործվում ե լեբեխայի վողջ գործունեության ընթացքում: Տանը ինքնուրույն կարդալու համար, նրանց գրքեր են տրվում լեկ առաջին խումբ անցնելով կարդում են բնագրեր, կարդացածը հասկանում են, գրում:

Ի՞նչ ոժանդակ պիտույքներ պետք ե ունենա ղեկավարը:

1. Մաքուր ստվարաթուղթ գրելու համար.
2. Գունավոր թուղթ լեկ գունավոր մատիտներ.

3. Թերթիկներ, վորոնց վրա տպված են ամենագործածական բառեր—որինակ՝ ոեժիմի մոմենտների, տեխնիկական ունակությունների, մաքրության հաշվառման բառերը լեկ ալին, վոր կարելի լինի այդ բառերը կտրել լեկ ստվարաթղթերի վրա կպցնել:

4. Թերթիկներ, վորոնց վրա խոշոր տառերով տպված են կարճ նախադասություններ, պատից կախած ստվարաթղթերին կպցնելու համար:

5. Զանազան լուսոններ.

6. Խոշոր տառերով տպված կարճ, թեթև պատմվածքներ վոտանափորներ, հանելուկներ:

7. Թեթև, մատչելի լեզվով գրված նկարազարդ գրքեր:

8. Նկարներ, բովանդակությունը պատմել տալու համար:

9. Ինքնուրույն աշխատանքի համար առաջադրություններ:

Մեծ նշանակություն ունի, լեթե լերեխաներն իրենք ոժանդակ պիտույքներ-ալբոմներ, լուսո լեկ ալին—պատրաստեն:

Վոչ մի թանգարժեք դիդակտիկական նյութ չի պահանջվում: Բոլոր պիտույքները պետք ե պատրաստեն լերեխաները, հաղթահարելով լեղած դժվարությունները: Ամեն մի պարապմուն-

քեց առաջ ղեկավարը նախորոք պետք ե պատրաստի կարդալու բառերը, նախադասությունները, ինքնուրույն աշխատանքի առաջդրություններ:

ԿԱՂՄԱԿԵՐՊՈՒՄ

Մանկապարտեզում, վոր մեծ ուշադրություն ե դարձվում լերեխաների առողջության, կանոնավոր ոեժիմի, գրուսանքի, քնի վրա, այս մոմենտները վոր դպրոցուն չկան, շատ ժամանակ են խլում: այդ պատճառով գրաճանաւության համար ավելի քիչ ժամանակ ե մնում, քան դպրոցի զերո խմբում, բայց այս դըրությունը հարթվում ե նրանով, վոր մանկապարտեզի բարձր խմբի լերեխաներն ավելի պատրաստականությունն ունեն յուրացնելու կարդալու լեկ գրելու տեխնիկան, քան դպրոցի լերեխաները: Գրամանաշությամբ լերեխաներն զբաղվում են ուրական 25—30 րոպե:

Պարապմունքների բնոււթը դպրոցական պարապմունքը բնոււթին համարյա թե նման ե: Բոլոր լերեխաներն ել զբաղվում են զրածանաշությամբ, պարապում են կազմակերպված ձեզով, ստանում են միևնույն առաջադրությունը, կամ լուրաքանչյուր բըիգադ աշխատում ե իր առաջադրությամբ, կամ ուժեղ լերեխաները ստանում են ինքնուրույն առաջադրություն, իսկ ղեկավարը պարապում ե թուլ խմբակների հետ:

Վորոշ մոմենտաներում լերեխաներն աշխատում են ընդհանուր առաջադրությամբ, բայց աշխատանքը բաժանում են իրենց մեջ: մի բըիգադ կատարում ե առաջադրության մի մասը, մըուսը լերկը մասը, իսկ հետո բոլորը միասին ամփոփում են կատարում: Հնդույակի մի որում լերեխաները զրածանաշության ինքնուրույն ազատ վարժություններ են կատարում լեղած նյութերով:

Այսպիսով տեղի լին ունենում բըիգադային, խմբակային լեկ անհատական պարապմունքներ:

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ

1. ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ա. Միջին խմբի համար

Յերեխաները տանում են տեսողության, հիշողության զարդացման վարժություններ: Նրանք պետք ե կարողանան հիշության միջոցով ձեվերն ըմբռնել, բառերը կանոնավոր կերպով արտասանել, խոսել պարզ, փորոշ, առանց վերջավորությունները կուլ տալու յեվ շատապելու:

Կատարել բանավոր կերպով առած հանձնարարությունները, իր խմբի ժողովներում խոսել:

Ստանում են բառի ձեվը, հիշելու առաջին վարժությունները:

Հիշել զեկուվարի արտասանած կամ կարդացած վուանափորը յեվ առոգանությամբ արտասանել:

Կազմակերպված ձեվով միասին աշխատել:

Գործը հասցնել իր վախճանին.

Ինքնուրուն կերպով պարզ առաջադրություններ կատարել:

բ. Ավագ խմբի համար

Հայտնաբերվում են ձեռք բերած բոլոր ունակությունները յեվ կարողությունները, շարունակվում ե նոր բառերով վարժությունները յեվ հիշելը. պետք ե կարողանան այլ բառերի մեջ ճանաչել իրենց ծանոթ բառը:

Բառերի վերլուծումը տառերի յեվ այդ իսկ տառերից բառեր կազմելը, այդ տառերից նոր բառեր կազմելը յեվ ամբողջությամբ արտասանելը:

Աշխատանք շարժական տառերով, կարճ նախադասություններ կարդալը, յեվ նույնպիսի նախադասություններ կազմելը:

Կարողանալ տրագ, սահուն, տուանց հեգելու կարդալ կարճ բնագիր, կազմված կարճ նախադասություններից, վորոնք իրարից բաժանված են վերջակետով: Կարողանալ վերջակետին համելիս կանգ առնել: Իմանալ վոր վերջակետից հետո զրվում ե մեծատառ, յեվ վոր անուններն սկսում են մեծատառով:

Կարողանալ ըստ ելության պատասխանել իրենց կամ զեկավարի կարդացած համառոտ պատմվածքի մասին տված հարցերին:

2. ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ

ա. Միջին խմբի համար

Կարողանալ նկարել սահմանագծերը չանցնելով: Ընդորինակել տպագրված բառեր: Դրելիս կարողանալ տիրապետել մատիտին: Աշխատանքի ժամանակ կանոնավոր նստել:

բ. Ավագ խմբի համար

Յերեխաները վարժվում են տպագիր տառերով բառերի ընդորինակման: Գրել ինքնուրուցն կերպով, ծանոթ բառեր չընդունակելով յեվ առանց տառեր բաց թողնելու: Տեսողությամբ համեմատել տպագրված դասերը ձեռագիր տառերի հետ:

Գրել մեկ տողանի տետրակի վրա: Ունենալ պարզ ու կանոնավոր գրելու ունակություն: Գրատախտակից արտագրել ծանոթ ընագիր: Կանոնավոր նստել, տետրակին ու մատիտը կանոնավոր պահել:



50



ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

193

11

26123

